պանիրը եւ մեղրը շատ յարգի ու վնտռուած ապրանք են Թիֆլիսի եւ Ռուսաստանի շուկաներում։ Հայաբոյսերի մշակութիւնը հետզհետէ տեղի է տալիս մի կողմից անասնապահութեան եւ միւս կողմից գետնախնձորի (կարտոֆիլ) մշակութեան։

Հարթամայրի (Բորչալուի գաւառ) կլիման նպաստաւոր է ինչպէս բամպակի, այնպէս եւ խաղողի ու պտղատու ծառերի մշակութեան համար։ Պէտք է ասել, որ Լոռուայ ձորում եւս խաղողի որթ եւ պտղատու ծառեր մշակւում են, թէեւ, ի հարկէ, սակաւ յաջողութեամբ։

Բացի անտառներից՝ Լոռիի սարերը ունին բնական ուրիշ հարստութիւններ եւս։ Նրանք իրենց ծոցում պահում են պղնձի հանքեր։ Այդ հանքերը աւելի շուտ եւ աւելի մեծ չափերով են սկսել շահագործուիլ, քան Հայաստանի միւս գլխաւոր պղնձահանքերը — Զանգեզուրում։ Լոռիում են գտնւում ծանօթ Ալլահվերտիի հանքերը, ինչպէս նաեւ մի շարք ուրիշները։

Բնա-աշխարհագրական, տնտեսական, ազգագրական եւ պատմական տեսակէտից՝ Տաշիրքը եւ կամ Բորչալու գաւառը իր մեծ մասով ներկայացնում է մի ամբողջութիւն։ Նա գրաւում է ուրեմն Խրամի եւ Զորագետի միջեւ ընկնող տարածութիւնը։

Ցարական կառավարութեան օրով նա ամբողջապէս առնուած էր Թիֆլիսի նահանգի մաս կազմող Բորչալուի գաւառի մէջ։ Այս վերջինը ունէր վեց հազար քառակուսի վերստ տարածութիւն, որի մի շատ փոքր մասը միայն, հազիւ 1000 քառ. վ., ընկնում է Խրամի ձախ կողմը, այսինքն՝ հայկական հողերից դուրս։

Առաջին իսկ օրերին, երբ Անդրկովկասում գաւառական ինքնավարութիւն (զեմստվո) մտցնելու հարցը ծագեցաւ եւ դրա հետ կապուած վարչական նոր սահմանաբաժանումների խնդիրը հրապարակ հանուեցաւ, հայ հասարակութիւնը պահանջ ներկայացրեց Բորչալուի մեծ մասի վերաբերմամբ, մինչեւ Խրամ գետը, որպէս պատմականօրէն եւ ցեղագրօրէն հայկական հողերի։ Վրացական ղեկավար կուսակցութիւնները, սոցիալ-դեմոկրատները եւ ֆեդերալիստները, համաձայն գտնուեցան այդ (ինչպէս նաեւ Ախալքալաքի) պահանջին, այնչա՛փ արդար էր նա եւ նուազագոյն չափերի հասցրուած։ Ինչպէս ուրիշ առիթներով ասել եմ, Կերենսկիի ժամանակաւոր Կառավարութեան օրով եւս հաւանութիւն գտաւ այդ ծրագիրը։

Երբ պատերազմը չվերջացած՝ բոլշեւիկեան յեղաշրջում առաջ եկաւ եւ ռուս բանակները տուն գնացին, Կովկաս մտան տաճկական բանակները։ Վրացիները հրաւիրեցին գերման զօրամասեր, աւելի շուտ՝ տեղւո՛յն վրայ կազմակերպուեցան (գերման ռազմագերիներից եւ այլ տարրերից) դրանք, որպէս գրաւող բանակ։ Օգտուելով Հայաստանի եւ հայ ժողովուրդի ողբերգական վիճակից — թուրքը առել էր Այէքսանդրապոլը եւ Երեւանի գոնեին հասել,— վրացիները վիլհելմեան զինուորներին առաջները գցած՝ նրանց տարին հասցրին մինչեւ Շահալի կայարանը, «Վրաստանի հարաւային սահմանը»։ Նոյն այդ օրերին Ծերեթելին դեռ պահանջում էր, որ «վրացական սահմանը» մինչեւ Սեւանայ լիճը տարուի հասցրուի։ Եւ եթէ տաճկական զօրքերը այնչափ խորը մտած չլինէին Հայաստանի ներսերը եւ յետագային համար իրենց «վերապահած» չլինէին Փամբակն ու Դիլիջանը, ո՞վ գիտէ, գուցէ թէ Ծերեթելիները վիլհելմեան սպաների ձեռքով նորանոր շագանակներ եւս հանած լինէին հայկական կրակից։

Ինչ եւ է։ Խնդիրն այն է, որ 1918-ի Յունիսին արդէն՝ վրացիները իրենց երկրի սահմանների մէջ առին Բորչալուի գաւառը ամբողջովին, ասել է՝ նաեւ նրա մաս կազմող Լոռին։ Նոյն թուականի վերջը, երբ տաճիկները եւ գերմանները պարպեցին Անդրկովկասը, հայկական զօրքերը գրաւեցին բուն Լոռին։ Վրացիները ընդդիմացան։ Տեղի ունեցաւ «հայ-վրացական պատերազմը»։ Վրայ հասան «մեր մեծ դաշնակիցները» ու որոշեցին, որ բուն Լոռուայ մի մասը (Ջալալօղլիի շրջան) լինի հայկական, նրա միւս մասը՝ «չէզոք գօտի», իսկ անդին տարածուող գաւառամասը՝ վրացական։

Երբ Քեմալը ռուսների համաձայնութեամբ Հայաստանի վրայ արշաւեց, նա չմոռացաւ կանխաւ սիրաշահել վրացիներին, ա-